ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1949, № 3 *Общественные науки*

Դ. Սահակյան

# ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ՈՐՊԵՍ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՔՆՆԱԴԱՏ

*Նալբանդյանը ոչ միայն գտնվում էր ռուսական ռևոլուցիոն դեմոկրատների գաղափարական ազդեցության տակ, այլև ակտիվ մասնակցություն է ունեցել Գերցենի լոնդոնյան խմբակի պրոպագանդիստական աշխատանքներին։ Նալբանդյանի ծանոթությունը ռուսական ռևոլուցիոն դեմոկրատների գաղափարախոսության հետ սկսվում է ոչ թե այն շրջանից, երբ նա վաթսունական թվականներին լինելով արտասահմանում, կապվում է Գերցենի խմբակի հետ, այլ ավելի վաղ, երբ նա ազատ ունկնդիր էր Մոսկվայի Համալսարանում (1853—1859 թ. թ.)։ Այդ տարիներին ռուսական առաջավոր ուսանողությունը համալսարանում զբաղված էր Գերցենի և Չերնիշևսկու ուսմունքի պրոպագանդայով։ Նալբանդյանը, որ իր ծննդավայրից Մոսկվա էր տեղափոխվել Նոր Նախիջևանի հարուստներից, կաթողիկոսի կամակատար հոգևորականներից հալածված և արդեն անցել էր դասակարգային պայքարի բովով, չէր կարող անտարբեր լինել ռուս ռևոլուցիոն դեմոկրատների ուսմունքի նկատմամբ։*

*Որ Նալբանդյանի՝ համալսարանում սովորելու տարիներին իրոք գոյություն են ունեցել ուսանողության մեջ ռևոլուցիոն տրամադրություններ, այդ մասին հարուստ նյութ կա Մոսկվայի պետական համալսարանի 1940 թ. հրատարակած գիտական Տեղեկագրում։ 1857—1858 թ. թ. համալսարանում առաջանում են ուսանողական ցույցեր ուղղված ռեակցիոն պրոֆեսուրայի և համալսարանի դաժան կարգերի դեմ։ Ցարական կառավարությունը ուսանողական ցույցերի դեմ հանում է ոստիկանություններ, որը դաժանորեն հալածում է ցույցերը կազմակերպողներին, բանտարկում է նրանց և ռեպրեսիվ միջոցներով փորձում ճնշել շարժումը։ Գերցենը այդ առթիվ գրել է, որ լեհացիները և ռուս գյուղացիների արյունը միախառնվել է լավագույն ուսանողության արյանը։ Ուսանողության մեջ ռուս ռևոլուցիոն դեմոկրատների ուսմունքի տարածման մասին այդ տեղեկագրում հետևյալն է ասված. «Ուսանողական միջավայրում խոշոր չափերով տարածվում էին Գերցենի, Դոբրոլյուբովի և Չերնիշևսկու ռևոլուցիոն գաղափարները։ Ուսանողական ինքնազարգացման խմբակներում ուսումնասիրում էին արևմտաեվրոպական մեխանիստ մատերիալիստներ Բյուխներին, Մոլեշոտին, ուտոպիստներ Սեն-Սիմոնին և Ֆուրիեին»[1] Այդպիսի մթնոլորտում է, որ Նալբանդյանը դաստիարկվում է ռևոլուցիոն դեմոկրատիայի իդեաներով և իր ամբողջ կյանքում այդ գաղափարների պրոպագանդիստն ու տարածողն է հանդիսանում հայ իրականության մեջ։ Մինչև արտասահման գնալը Նալբանդյանը արդեն արտահայտում էր ռևոլուցիոն դեմոկրատական տրամադրություններ, այդ երևում է «Հյուսիսափայլի» էջերում գրած գործերում և առհասարակ նրա այդ շրջանի աշխատություններում։ Նալբանդյանի Լոնդոն գնալն էլ (1862) պատահական չէր, նա տեղյակ էր Լոնդոնի պրոպագանդիստների գործունեությանը։*

*Նալբանդյանի սերտ կապը Գերցենի խմբի հետ ապացուցվում է նաև այն*

[1] Տե՛ս Учен. запис. МГУ за 1940 г., стр. 63.

փաստով, որ նրա ձերբակալությունը զուգադիպեց վերջինիս խմբի գործակալների ձերբակալության հետ։ Ցարական սենատը Նալբանդյանին դատապարտում է այն պատճառով, որ նա իմացել է «Լոնդոնյան պրոպագանդիստների հանցագործ դիտավորությունների մասին»։ Նալբանդյանին Գերցենն անձամբ ճանաչել է և նրա մասին գրել է. «ոսկի հոգի է, նվիրված է անշահախնդիր, պարզ կերպով, սրբությամբ»։[1]

Միայն այն մարդը կարող է Նալբանդյանի մասին այսպիսի տողեր գրել, որը նրան լավ էր ճանաչում։ Նալբանդյանի կապերը Գերցենի լոնդոնյան խմբի հետ կրում էին սկզբունքային բնույթ. խոսքը միայն անհատական բարեկամության կամ մտերմության մասին չէ։ Ինչպես ռուս ռևոլուցիոն դեմոկրատները, նույնպես և Նալբանդյանը ունեցել են որոշակի քաղաքական պլատֆորմա, ծրագիր, որի նպատակն է եղել ժողովրդի ազատագրումը։ Սակայն, եթե ռուս ռևոլուցիոն դեմոկրատները ձգտում էին լուծել ագրարային հարցը, ապա Նալբանդյանը հողային հարցի լուծման զուգահեռ դնում էր ազգային հարցի լուծումը։ Փաստորեն ստեղծվել էր այնպիսի վիճակ, որ ռուս ռևոլուցիոն դեմոկրատները ազգային ազատագրական շարժումը դիտում էին որպես իրենց հնարավոր դաշնակցի՝ ցարիզմի դեմ մղած պայքարում, իսկ հարստահարվող ժողովուրդների ներկայացուցիչները, տվյալ դեպքում Նալբանդյանը, հասկացել էին, որ սեփական ժողովրդի ազատությունը կախված է ռուսական ռևոլուցիայի հաղթանակից։

Սակայն, Նալբանդյանը՝ ընդգծելով ազգային հարցի լուծման անհրաժեշտությունը, երբեք այդ հարցը չի բաժանել գյուղացիական ռևոլուցիայի ընդհանուր հարցերից։ Նալբանդյանի աշխատությունները հաստատում են, որ նա ազգային հարցի լուծումը չի մեկուսացրել ռուսական ռևոլուցիայի ընդհանուր հարցերից։ Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը, որտեղ նա քննադատում է կապիտալիզմը և ճորտատիրական կարգերը, գրված է այդ դաղափարով. այնտեղ նա փորձում է այդ երկու հարցը լուծել միաժամանակ։ Նալբանդյանը «Երկրագործության» մեջ ոչ միայն հայ ժողովրդի ազատագրման հարցն է բարձրացնում, այլև անկեղծ համակրանք է ցույց տալիս Ռուսաստանում դտնվող բոլոր ժողովուրդների ազատագրության նկատմամբ։ Ռուս ռևոլուցիոն դեմոկրատների դաղափարական ազդեցությունը Նալբանդյանի աշխարհայացքի վրա հանդես է գալիս ամենուրեք՝ նրա հարուստ և բազմակողմանի դրական ժառանգության մեջ։

Ռուսական ռևոլուցիոներների իդեական ազդեցությունը հատկապես ուժեղ չափով երևում է նրա այնպիսի աշխատությունների վրա, ինչպիսիք են՝ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ», «Հեղեր և նորա ժամանակը», «Կրիտիկա Սոսի և Վարդիթերի» քննադատական ակնարկը և բերդից գրված նամակները։ Այդ բոլոր աշխատությունները հագեցված են Ֆոյերբախի և Չերնիշևսկու մատերիալիզմով։

Սակայն Նալբանդյանը միայն ընդօրինակող չի եղել, նա խիստ քննադատության է ենթարկել կապիտալիզմը և ժամանակակից պետությունների կաղութային քաղաքականությունը։ Նալբանդյանը հասկանում է ֆեոդալական և բուրժուական հասարակության անտագոնիստական բնույթը։ Ժամանակակից հասարակությունը կազմված է հակադիր շահեր ունեցող դասակարգերից։

[1] Տես „Колокол" № 9, за 1906 г.

Իշխող դասակարգերի շահերը Նալբանդյանի կարծիքով համընկնում են պետության շահերի հետ։ Հասարակության հարստություններ գտնվում է պետության և ունևորների ձեռքը։ Ըստ Նալբանդյանի՝ ունևոր դասակարգերն են՝ կալվածատերերը, ֆերմերները, արդյունաբերական, առևտրական և ֆինանսական բուրժուազիան։ Հասարակ ժողովուրդը՝ արհեստավորները, գյուղացիները և բանվորները հասարակական հարստության հետ ոչ մի առնչություն չունեն։ Նալբանդյանը փորձում է այդ դասակարգերից յուրաքանչյուրի դերը որոշել հասարակության մեջ։ Նա սուր քննադատության է ենթարկում հողային սեփականությունը, որը՝ Նալբանդյանի կարծիքով, ժամանակակից հասարակության չարիքների գլխավոր պատճառն է։ Հողը հանդիսանում է հասարակական հարստության աղբյուրը և սակայն գտնվում է կալվածատերերի ձեռքին։ Ֆերմերները վարձու բանվորների միջոցով մշակում են կալվածատիրոջ հողը կապալով և կապալավարձ են վճարում։ Նալբանդյանը կապալավարձը և ռենտան նույնացնում է, նա ընդգծում է, որ ֆերմերը տնտեսապես կախված է հողատիրոջից, իսկ վարձու բանվորները չունեն արտադրամիջոցներ, ստիպված իրենց բանվորական ուժն են վաճառքի հանում։ Նա բանվորական ուժի գիտական ըմբռնումը չի բացահայտում, միայն ընդգծում է, որ բանվորների և արտադրամիջոցների սեփականատերերի միջև գոյություն ունի հակասություն։ Առևտրական կապիտալը հանդիսանում է արդյունաբերական կապիտալի գործակալը, իսկ վերջինս ենթարկվում է մոնոպոլիստ ֆինանսիստներին, որոնք ստրկացնում են ամբողջ աշխարհը իրենց վարկային գործարքներով։

«Անգլիական երկրները,— գրում է Նալբանդյանը,— ազնվականների մասնավոր սեփականությունք են. հասարակ ժողովուրդը մի հատ ցից զարկելու հող չունի։ Լոնդոնի, այն հսկա-քաղաք աշխարհի հողը յոթն ազնվական տան սեփականություն է, որոնց առաջինն է թագավորական տունը։ Հասարակ ժողովուրդը յուր երկու ձեռքից ավելի բան չունի. նա բնակվում է ազնվականների հողի վերա և վարձ է վճարում հողի տիրոջ։ Հասարակ ժողովուրդը հող չունենալով չի կարող երկրագործությամբ պարապիլ. այն միլիոնները, որ բնակվում են Անգլիո մեջ, սրակուն աշխատող, վարձկան մշակներ են, ծառա և գործավար։ Այդ միլիոնավոր բազմության միջից այն մարդիկը, որ դրամագլուխ ունին, վարձում են մի որևիցէ ազնվականի հողը, վարձում են հազարավոր մշակներ և գործում են երկիրը. սոքա են ֆերմեր ասացյալքը»[1]

Այնուհետև Նալբանդյանը ցույց է տալիս այդ դասակարգերի փոխադարձ տնտեսական կախվածությունը, ըստ որում հասարակական կյանքում նա է իշխում, ով հող և կապիտալ ունի։ Տնտեսական գերիշխանությունը պայմանավորում է տվյալ դասակարգի քաղաքական գերիշխանությունը։ Նալբանդյանը փորձում է դասակարգերի դիրքը որոշել տնտեսական հատկանիշով, նա ցույց է տալիս կապիտալիստական հասարակարգի անտագոնիստական բնույթը, աշխատավորներին հակադրում է շահագործողներին, միաժամանակ նշում է իշխող դասակարգերի ներդասակարգային հակասությունները։

Այսպես, օրինակ, արդյունաբերական կապիտալի, առևտրականի, կալ-

[1] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, 3-րդ հատ., էջ 46։

վածատիրոջ և ֆերմերի միջև ևս գոյություն ունի տնտեսական շահերի հակադրություն։ Նալբանդյանը ընդգծում է ֆինանսիստ մոնոպոլիստների աճող հարստահարությունը, ճնշումը հասարակության նկատմամբ։ Ֆինանսական կապիտալը Նալբանդյանի էպոխայում դեռևս կոյություն չի ունեցել, այստեղ Նալբանդյանը ֆինանսիստ մոնոպոլիստների տերմինի տակ հասկանում է վաշխառուական և բանկային կապիտալը։ Նալբանդյանը սրանց գերը գերագնահատում է, չնկատելով արդյունաբերական կապիտալի գերիշխող լինելը։ Սակայն այս սխալ հարցադրման մեջ ևս կա ճշմարտության հատիկ, նա նշում է կապիտալիզմի սկսվող պարազիտիզմի էլեմենտները։ Բանկային և վաշխառուական կապիտալի ճնշումը հասարակության վրա, Նալբանդյանը հիմնավորում է հետևյալ կերպ. տեխնիկայի և արդյունաբերության զարգացման զուգահեռ աճում է ազնիվ մետաղների արտադրությունը, բայց դրանից հասարակությունը չի հարստանում, փող չի գտնվում ոչ միայն ժողովրդի մոտ, այլև ամենահարուստ պետություններն սնգամ փողի կարիք են զգում։ Անգլիայի բյուջեն 1861 թ. 1,5 միլիոն ֆ. ստերլինգի պակասորդ է ունեցել։

Ո՞րն է դրա պատճառը. Նալբանդյանը այդ երևույթը բացատրում է այն բանով, որ ոսկին և արծաթը գտնվում էին ամենից առաջ մոնոպոլիստ բանկիրների մոտ, որոնք իրենց վարկերով աշխարհը խեղդում են, և ապա՝ հողատերերի մոտ։ Նալբանդյանը նշում է, որ բանկերը և վաշխառուական կապիտալն իրենցից կախման մեջ են պահում ոչ միայն արդյունաբերական կապիտալը, այլև պետությունը։ Այստեղ Նալբանդյանը գալիս է պետական փոխառությունների հասկացողությանը, փոխառություններ, որոնք ծախսվում են անարտադրողաբար, բայց հանդիսանում են բանկիրների հարստացման աղբյուրը։ Այս իմաստով նա խոսում է կապիտալիզմի ընդերքում սկսվող պարազիտիզմի մասին։

Նալբանդյանը տարվելով վաշխառուական կապիտալի և հողային սեփականության քննադատությամբ, չկարողացավ հասկանալ արդյունաբերական կապիտալի առաջատար դերը կապիտալիստական-էկոնոմիկայում, այդ պատճառով նա ի վիճակի չեղավ բացահայտելու բուրժուական հասարակության երկու հիմնական դասակարգերի՝ պրոլետարիատի և բուրժուազիայի դերն արդի հասարակության պատմության մեջ։ Նալբանդյանը չհասկացավ պրոլետարիատի ռևոլուցիոն միսիան, նա պրոլետարիատին ձուլում է, միացնում է հասարակ ժողովուրդ ընդհանուր հասկացողության մեջ։ Սակայն Նալբանդյանի խոշոր ծառայությունն այն է, որ նա փորձում է հասկանալ բուրժուական հասարակության դասակարգային կառուցվածքը և երբեմն շատ ճիշտ դիտողություններ է անում կապիտալիզմի հակասությունների մասին։

Նալբանդյանը քաղաքականության և էկոնոմիկայի փոխհարաբերության հարցը ևս քննարկում է, ըստ որում առաջնություն տալիս է էկոնոմիկային։

«Եվ քանի որ տնտեսական խնդիրը — այն բաղմակնճիռ Գորդիասի կապը լուծված չէ, հասարակությունը յուր ընկերական և լ.նտանեկան հարաբերությանց մեջ ազատ չէ, թող քառասուն անգամ, եթե կամենան, փոփոխեն կառավարության ձևը, բայց քանի որ հասարակության մի մասը տիրապետել է հողին, իսկ մյուս մասը մնում է մուրացիկ, այնտեղ թագավորում է բռնությունը»։[1]

[1] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, 3-րդ հատ., էջ 30։

Այսպիսով կառավարության փոփոխությունը չի վերացնում տնտեսական անհավասարությունը, կառավարությունը ինքը այդ անհավասարության պաշտպանն է, ամրապնդում է այն։ Նալբանդյանը որոշակի ընդգծում է, որ ինչպիսի առաջադիմական կառավարություն էլ լինի, նա ի վիճակի չէ քաղաքացիների մեջ հավասարություն ստեղծել, եանի այդ անհավասարության հիմքը, նրա պատճառները վերացված չեն։

Նալբանդյանը հիմնավորում է այն տեսակետը, որ հասարակական կյանքում հիմնականը, էական տնտեսական բազիսի փոփոխության մեջ է.

«Ազատությունը ըստինքնյան լոկ խոսք է և իրողապես չէ կարող մարմնանալ, առանց տնտեսական խնդրի լուծվելուն։ Ոչ մի ազատ կառավարություն, ոչ մի ազատ օրենսդրություն չի կարող փրկել մարդը ստրկությունից, մինչև որ այդ մարդը հողի վերա իրավունք ունեցող չխոստովանվի։ Եվ մինչև այս, ընդհանրական աղքատությունը երիալով պիտի զորանա և հասնի հսկայական աստիճաններին»[1]

Չնայած այստեղ Նալբանդյանը միայն հողային սեփականության մասին է խոսում, բայց և այնպես հիմնականը նրա մոտ այն է, որ ստրկությունը չի վերացվի, կապիտալիզմի հակասությունները անհնարին է հաղթահարել, առանց տնտեսական հարցի լուծման։ Նալբանդյանը անգամ բուրժուական պարլամենտարիզմի հարաբերական պրոգրեսիվ շրջանում ցույց է տալիս բուրժուական պետության դասակարգային սահմանափակվածությունը։

Նալբանդյանը հասկանում է, որ չնայած բուրժուական կառավարության ձևերը փոխվում են, բայց նրա դասակարգային էությունը չի փոխվում, նա մնում է որպես ստրկացման գործիք, բռնության մարմնացում, պաշտպանում է իշխող դասակարգերի շահերը և մասնավոր սեփականությունը։ Ինչի՞ց է հետևում որ պետությունը պաշտպանում է իշխող դասակարգերի շահերը։ Նրանից, որ հասարակության մեջ շահագործումը, հարստահարությունը, բռնությունը վերացված չեն, իսկ այդ բոլորն ուղղված է հասարակ ժողովրդի դեմ։ Նալբանդյանը իր տեսակետը էկոնոմիկայի վճռական դերի մասին հետևողականորեն զարգացնում է նաև հավասարության կատեգորիայի բացահայտման հարցում։ Նա ամենայն անողոքությամբ քննադատում է հավասարության բուրժուական հասկացողությունը, մերկացնում է բուրժուական թեորիաների կեղծավոր բնույթը, որ ձգտում են ապացուցել թե կապիտալիզմը ստեղծել է հավասարություն։ Տնտեսական անհավասարության պայմաններում քաղաքական հավասարությունը հանդիսանում է խաբեբայություն և կեղծիք։

Նալբանդյանը ծաղրում, սուր քննադատության է ենթարկում բուրժուական ռևոլուցիայի «ազատություն», «եղբայրություն», «հավասարություն» լոզունգները։ Դրանք բոլորը գոյություն ունեն թղթի վրա, քանի որ իրական, նյութական հավասարություն հասարակության անդամների միջև գոյություն չունի։ Նալբանդյանը իր տեսակետը հիմնավորում է հետևյալ ուշագրավ դիալոգով։

«Շատ բարի, բայց ասա խնդրեմ, ազա՞տ եմ ես միմիայն օրենքով, քաղաքականապես ազատ կոչվելով, ազա՞տ եմ ես, քանի որ նյութական կարոտությունը ստիպում է ինձ, կամա ակամա, մի ուրիշին ստրկանալ, ուրիշին ծառայել և այդ ծառայությամբ հաց ճարել իմ ընտանիքի համար։ Ազա՞տ եմ Ես եթե տեր ունիմ, որին եթե իմ ազատությունը հայտնեմ բացարձակապես,

[1] Նույն տեղում, էջ 61։

պիտի զրկեմ ապրուստից և ինձ և իմ ընտանիքս, ծառա լինելուց դադարելով, և այս բոլորից հետո ազա՞տ եմ ես... երևակայությա՞ն մեջ, թե՞ օդի մեջ»[1]

Պարզ է, որ Նալբանդյանի համար էականը, առաջնայինը տնտեսական ազատությունն է, տնտեսական հավասարությունը։ Նալբանդյանը իրավացի է, երբ պահանջում է հավասարությունը իրագործել կյանքում տնտեսական հավասարությամբ։ Այդ հարցում ոչ մարքսիստ Նալբանդյանը անսխալ է քննադատում բուրժուական հավասարության էությունը։ Էնգելսը այդ մասին գրել է. «Պրոլետարիատը բուրժուազիային նեղն է լծում, հիմնվելով հենց իրեն բուրժուազիայի խոսքերի վրա.— հավասարությունը ոչ թե լոկ առերևույթ պիտի լինի, ոչ թե լոկ քաղաքական բնագավառում պիտի կիրառվի, այլև փաստորեն պիտի իրականացվի, այլև հասարակական ու տնտեսական բնագավառներում պիտի կենսագործվի»։

Նալբանդյանը կապիտալիստական ճգնաժամների օրինակով ցույց է տալիս ժողովրդական մասսաների անտանելի ծանր պայմանները և կապիտալիստական արտադրական եղանակի սահմանափակ լինելը։

Ճգնաժամների հետևանքով հանդես է գալիս կապիտալիստական հասարակարգի սնանկությունը, փակվում են գործարանները, մասսաների դրությունը վատանում է, աճում է գործազրկությունը։

Նալբանդյանը հասկանում է, որ ճգնաժամները՝ ստեղծելով ծանր պայմաններ աշխատավորության համար, միաժամանակ հարվածում են կապիտալիստների շահերին, որոնք չեն ուզում գործարանները փակել, և այդ անում են իրենց կամքից անկախ։ Նալբանդյանը չի բացահայտում ճգնաժամների պատճառները, բայց հասկանում է, որ ճգնաժամները կապիտալիզմի անխուսափելի ուղեկիցներ են։ Քննադատում է կապիտալիզմի անցողիկ պատմական բնույթը, ցույց է տալիս, որ կապիտալիստական հարստության հիմքերը խախուտ են և այդ հարստությունը հասարակության շահերի հետ անհաշտելի հակասության մեջ է գտնվում։

«Այժմ հարցնում ենք, հարո՞ւստ է անգլիական ազգը, եթե մի քանի գործարան փակվելով, կամ մի ժապավեն գործածությունից դուրս ընկնելով բյուրավոր մարդիկ և թյուրավոր գերդաստանք, դառն աղքատության հետ պատերազմելով, կարող են սովամահ կորսվել։ Հարո՞ւստ է ֆրանսիական ժողովուրդը, եթե մի քաղաքում մի քանի գործարանք փակվելով, մի ահագին բազմություն գործավորների կդատապարտի դեպի մուրացկանություն... Չէ, հարուստ չէ, ասում ենք և այն դրականապես»[2]

Նալբանդյանը հասկանում է, որ տնտեսության առանձին ճյուղերի միջև կապիտալիստական էկոնոմիկայում գոյություն ունի փոխադարձ կապ՝ աշխատանքի բաժանման հետևանքով, այդ պատճառով ճգնաժամի առաջացումը մի ճյուղում, առաջացնում է համապատասխան փոփոխություններ մյուս ճյուղերում, ճգնաժամը ընդգրկում է ամբողջ երկրներ, որովհետև միջազգային առևտրի միջոցով սերտ կապ է ստեղծվել տարբեր երկրների միջև. այսպես, օրինակ՝ տեքստիլ արդյունաբերության զարգացումը Անգլիայում, կախված է ԱՄՆ-ի բամբակագործության զարգացումից։ Այդ պատճառով պատահակա-

[1] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, 3-րդ հատ., էջ 52։
[2] Ֆ. Էնգելս, Անտի Դյուրինգ, հայ. հրատ., 1936 էջ 141։
[3] Մ. Նալբանդյան. Երկերի լիակատար ժող., 3-րդ հատ., էջ 50։

նություն չէր, որ Անգլիան քաղաքացիական կռիվների ընթացքում պաշտպանում էր ԱՄՆ-ի Հարավային նահանգներին ընդդեմ Հյուսիսի։

Նալբանդյանը նշում է, որ ճգնաժամներից գլխավորապես տուժում են մանր կապիտալիստները, իսկ խոշորները փոքրերի կործանման հաշվին ավելի ուռճանում, հարստանում են։ Սակայն սրանց վիճակը ևս հարատև չէ, նրանք ևս ենթակա են սնանկացման։

«Եվ հավատացեք որ վաճառականությունը և արվեստը որչափ որ ծաղկին, թեև առանց երկրագործության չկա և վաճառականություն, որչափ որ մասնավոր մարդիկ միլիոններ դիզեն, այսուամենայնիվ ենթակա են բամբակի և ժապավենի ազդեցությանը։ Մի մրրիկ, մի փոթորիկ և... գնա՝ տխրադեմ ցնցել դատարկ քսակները, որոնց մեջ լցված էին երբեմն ոսկին և արծաթը։»[1]

Այսպիսով Նալբանդյանը ճգնաժամները համարում է որպես կապիտալիզմի անբաժանելի ուղեկիցներ։ Ճգնաժամները Նալբանդյանի կարծիքով սովորական [illegible]ություններ չեն, այլ՝ ինչպես փոթորիկ, մրրիկ, քշում տանում են ամեն ինչ իրենց ճանապարհին, խարխլում են կապիտալիստական սիստեմը։

Նալբանդյանի համար ակնհայտ է կապիտալիզմի հակասությունը, դա մի հասարակություն է, որ միլիոններին դատապարտում է քաղցի, սովամահության, հետևաբար այդ հասարակությունը գոյություն ունենալու իրավունք չունի։

Նալբանդյանը կապիտալիզմը քննադատում է, որոշակի դիրքերից նա ելնում է ժողովրդի շահերից և այն ամենը, որ ուղղված է այդ շահերի դեմ, նա դատապարտում է։ Այստեղ Նալբանդյանն արտահայտում է ժողովրդական մասսաների տեսակետը, ընդդեմ հարստահարիչների, շահագործողների դասակարգի։ Այդ հատկապես հանդես է գալիս, երբ նա գնահատում է ժամանակակից հասարակության հարստությունը։ Նալբանդյանը բացահայտում է հարստության դասակարգային էությունը, նա ցույց է տալիս, որ արդի հասարակության հարստությունը ժողովրդին չի պատկանում, այլ կալվածատերերին և բուրժուազիային։ «Ինչ հարկավոր է մեզ ազնվականների անհուն հարստության տեր լինելը, ի՞նչ հարկավոր է մեզ անգլիական դրամանոցի հսկայությունը, ի՞նչ հարկավոր է անգլիական կառավարության դրամի կարոտ լինելը, կամ ուրիշներին փոխ տալը, մինչդեռ միլիոնավոր ժողովրդի կյանքը կախվում է բամբակից և ժապավենից։»[2]

Կապիտալիզմի անցողիկ, պատմական բնույթը և նրա սահմանափակ լինելը Նալբանդյանը հիմնավորում է նաև այլ կերպ։ Նա գտնում է, որ կապիտալիզմն այնքան էլ հին պատմություն չունի, բայց սրագ կերպով դեպի անկումն է գնում, շնորհիվ իր ներքին անհաղթահարելի հակասությունների։ Նալբանդյանի տերմինաբանությունը այլ է, բայց դրանց իմաստը այդ է։

«Եվրոպան ուշ ծնեցավ, բայց շատ արագ ծերանում է։ Մի քանի գարու մեջ նա անցավ պատմության շատ կերպարանքներ — phase, փոփոխեց և փոփոխում է դեռևս կառավարությանց ձևերը, բայց ցարդ չի հասավ յուր նպատակին, որովհետև միշտ աշխատեցավ ճանապարհը լայնացնել, ուղղել, հարթել, մոռանալով, որ յուր նեղությունը ճանապարհից չի այնքան, որքան ոտքի կոշիկից, որ սեղմում է և չէ թողնում մանգալ[illegible]

[1] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժող., 3-րդ հատ., էջ 30։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, էջ 31։

Նալբանդյանը կապիտալիզմի առաջացումը պատմականորեն է հասկանում, պատմության զարգացման որոշ էտապում է առաջացել կապիտալիստական Եվրոպան և արագ կերպով ծերանում է, գնում դեպի անկում։

Եվրոպայի կապիտալիզմի զարգացման հեռանկարների հարցի գնահատման գործում Նալբանդյանը կանգնած է Գերցենի տեսակետի վրա։ Գերցենն այդ կապակցությամբ գրել է. «Ես կարծում եմ արդի Եվրոպայի դերը միանգամայն վերջացված է։ 1848 թվից նրա քայքայումը աճում է յուրաքանչյուր քայլով»։[1]

Ակնհայտ է, որ Նալբանդյանը՝ խոսելով կապիտալիզմի ծերացման մասին, իր խոսքերով Գերցենի այս միտքն է վերարտադրում։ Այստեղ երկու հեղինակները չեն հասկացել 1848 թ. ռևոլուցիայի էությունը։ Ռևոլուցիան Արևմտյան Եվրոպայի որոշ երկրներում ոչնչացրել էր ճորտատիրական հարաբերությունների մնացորդները և այդպիսով կապիտալիզմի զարգացման համար ստեղծել էր բարենպաստ պայմաններ։ Այդ հաստատում են մարքսիզմի կլասիկները։ Էնգելսը գրում է, որ 1848 թ. ռևոլուցիան ընդգրկել է Եվրոպայի ամբողջ կոնտինենտը, ստեղծել է խոշոր կապիտալիստական արտադրություն։ «Նա (պատմությունը— Գ. Ս.) ապացուցել է այդ տնտեսական ռևոլուցիայով, որը 1848 թվից ընդգրկում է ամբողջ կոնտինենտը և ճիշտն ասած առաջին անգամ փաստորեն արմատավորել է խոշոր արդյունաբերությունը, Ֆրանսիայում, Ավստրիայում, Հունգարիայում, Լեհաստանում վերջերս և Ռուսաստանում, իսկ Գերմանիան դարձել է ուղղակի առաջնակարգ արդյունաբերական երկիր»[2]

Այսպիսով կապիտալիզմը 1848 թ. ռևոլուցիայից հետո ոչ թե դեպի անկումն է գնում ինչպես ենթադրել են Գերցենը և Նալբանդյանը, այլ իր զարգացման վերընթաց շրջանն էր ապրում։

Նալբանդյանը «Երկրագործության» մեջ շոշափում է նաև մի շարք տնտեսագիտական կատեգորիաներ, սակայն շեշտը դնում է կապիտալիզմի ընդհանուր հակասությունների բացահայտման վրա և աշխատում է հիմնավորել իր ագրարային սոցիալիզմի ծրագիրը։ Նալբանդյանի աշխարհայացքի բնութագրման տեսակետից կարևոր է վերլուծել նաև նրա ըմբռնումը քաղաքատնտեսության առանձին կատեգորիաների նկատմամբ։ Շահույթի, փողի, ապրանքի, բանվորական ուժի կատեգորիաները Նալբանդյանը շարադրում է մյուս պրոբլեմների հետ շաղկապված, չի խորանում նրանց վերլուծության մեջ։ Չնայած դրան, նա դրսևորում է որոշակի գիտելիքներ նաև այդ ասպարեզում։ Նալբանդյանը ըմբռնում է շահույթի շահագործողական բնույթը. շահույթը բանվորի աշխատանքի արդյունքն է, ասում է նա, բայց յուրացվում է կապիտալիստի կողմից։ Ինչո՞ւ շահույթը յուրացնում է կապիտալիստը, որովհետև արտադրողը զուրկ է արտադրամիջոցներից, իսկ առանց այդպիսի միջոցների, անհնար է աշխատանքը։

«Աշխատությունը առանց նյութի և առանց հիմքի, հասարակայ վերաբերությամբ, չունի այն ուժը և զորությունը, ինչ որ ունի աշխատությունը, երբ նորա հետ զուգընթաց է նյութը, երբ այդ բոլորը հաստատած է հիմքի վրա։... Կարձկանի առաջ բերած արդյունքը վայելում է նորա տերը։ Ո՞վ է նո-

[1] Герцен. Полн. соб. соч., т. V, стр. 304.
[2] К. Маркс и Ф. Энгельс, т. XVI, стр. 471.

ra տերը։ Վաճառականը կամ գործարանատերը։ Ուրեմն, շահը վաճառակա-
նի կամ գործարանատիրոջ մոտ է։[1]

Այսպիսով՝ բանվորը առանց արտադրամիջոցների չի կարող աշխատել, իսկ այդ արտադրամիջոցները գտնվում են կապիտալիստների մոտ, հետևաբար աշխատանքային պրոցեսի համար տնտեսական անհրաժեշտություն է հանդիսանում նրանց միացումը, որ կատարվում է կապիտալիստի հրամանատարության տակ։ Նալբանդյանը հասկանում է, որ բանվորի ստեղծած շահույթի հաշվին ապրում են արդյունաբերական կապիտալիստը և նրա գործակիցները։

Նալբանդյանը միայն արձանագրում է շահագործման փաստը, սակայն շահագործման էությունը չի կարողանում բացահայտել, որովհետև բանվորական ուժի և աշխատանքի տարբերությունը նրան հայտնի չէին։ Նալբանդյանը կատարում է մի քայլ առաջ, երբ նա շահույթը կապում է արդյունաբերական կապիտալի հետ, տվյալ դեպքում, նրա համար կենտրոնական ֆիգուրան հանդիսանում է արդյունաբերական կապիտալը և ոչ թե կալվածատերը։ Առհասարակ, երբ Նալբանդյանը կապիտալիզմի քննադատությանը մոտենում է կոնկրետ ձևով, առանց իր ուտոպիայի, նա ավելի է մոտենում ճշմարտությանը։ Նալբանդյանը ցույց է տալիս, որ կապիտալիստների և հասարակության մյուս պարագիտ դասակարդերի միջև ոչ միայն հակասություն գոյություն ունի, այլև շահերի ընդհանրություն, որ նրանք բոլորն էլ շահագործողներ են։ Նալբանդյանն ասում է, որ աշխատանքի արդյունքը յուրացնում է կապիտալիստը, սակայն այստեղից չի հետևում, որ բանվորը աշխատավարձ չի ստանում, ընդհակառակը, նա ամենուրեք հաստատում է, որ բանվորը պահպանում է ընտանիքը՝ ի հաշիվ իր կատարած աշխատանքի, սակայն աշխատավարձի հասկացողությունը Նալբանդյանը չի ուսումնասիրում։ Նալբանդյանը խոսելով շահույթի մասին, փաստորեն գործ ունի հավելյալ արժեքի հետ, չնայած այդ տերմինը նրա մոտ բացակայում է։ Շահույթը հավելյալ արժեքի փոխակերպված ձևն է, իսկ այդ փոխակերպումների մասին Նալբանդյանը չգիտեր, ինչպես մինչև Մարքսը ոչ ոք չի բացահայտել այն։ Նալբանդյանը հետաքրքիր դատողություններ ունի նաև փողի մասին, բայց փողի էությունը չի բացահայտում։ Նա մետաղե դրամը տարբերում է թղթե դրամից։ Թղթե դրամը, ասում է նա, արժեք չունի, իսկ մետաղե փողի արժեքը որոշվում է ապրանքների մասսայի այն քանակությամբ, որոնց հետ նա փոխանակվում է։ Փողի արժեքը, կամ գները ըստ Նալբանդյանի, կախված է պահանջի և առաջարկի փոխհարաբերությունից։ Մետաղները՝ դործելով որպես փող, չունեն ռեալ արժեք, նրանց արժեքը կամ գինը պայմանական է, մետաղները այն դեպքում են ձեռք բերում ռեալ արժեք, երբ նրանք վեր են ածվում սպառ արժեքների։

Նալբանդյանի դատողությունները փողի մասին հակասական են, մի ուրիշ կապակցությամբ նա փողը համարում է իրական հարստություն։ Ավելին՝ նա ապացուցում է, որ գյուղատնտեսության ապրանքայնացման դեպքում փողի դերը մեծանում և այդ նպաստում է գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացմանը։ Սակայն այս դեպքում էլ փողի էությունը Նալբանդյանը վերը բերված իմաստով է հասկանում։

---

[1] Մ. Նալբանդյան, Երկեր, 3-րդ հատ., էջ 62։

«Դրամի արժեքը պայմանական մի բան է, նորա զորությունը կամ անզորությունը, նորա բարձրանալը կամ ցածնալը կապված է այն նյութերի շատության կամ սակավության, որոնց հետ կենթադրվեր փոխանակել դրամը։ Թանդությունը և դրամի արժեքն ընկնիլը համարձակ կարելի է թարգմանել պակասություն և կարոտություն այն նյութերի, որոնց հետ պիտի փոխվի դրամը, այստեղ կամքը կամ հաճույքը հանդես չունի»[1]

Այսպիսով, ըստ Նալբանդյանի դուրս է գալիս, որ փողը չունի սեփական արժեք և նրա գինը կախված է ապրանքների պահանջից և առաջարկից։ Փողի էության այդպիսի հասկացողությունը Նալբանդյանին մոտեցնում է Յումի և Ռիկարդոյի փողի քանակային թեորիային։ Սակայն նրանց մեջ գոյություն ունի ձևական տարբերություն։ Նալբանդյանը փողի արժեքը կամ նրա գինը բխեցնում է ապրանքային մասսայի քանակությունից, մինչդեռ քանակական տեսության կողմնակիցները գների տատանումները բխեցնում են փողի քանակից։ Եթե անգամ ենթադրենք, որ Նալբանդյանը տվյալ դեպքում ի նկատի ունի ոչ թե մետաղե դրամը, այլ թղթե, այս դեպքում ևս նա ճիշտ չէ, քանի որ թղթե դրամի շրջանառության օրենքն այլ է։ Այդ օրենքի էությունը Մարքսը կլասիկ կերպով ձևակերպել է.

«Եվ այս օրենքի էությունը պարզապես այն է, որ թղթադրամի արտարկը պետք է սահմանափակվի այն քանակով, որով պետք է իրոք շրջան գործեր այն ոսկին (կամ արծաթը) որը սիմվոլիկ կերպով ներկայացված է թղթադրամի մեջ»[2]

Փողը, ինչպես բոլոր ապրանքները, ունի սեփական արժեք։ Արժեքը ոչ թե որոշվում է պահանջով կամ առաջարկով, այլ ապրանքների արտադրության համար ծախսված հանրորեն անհրաժեշտ աշխատանքի քանակով, այդ օրենքը գործում է նաև ազնիվ մետաղների արտադրության դեպքում։

Սակայն Նալբանդյանի այդ դատողության մեջ ևս առկա է ռացիոնալ հատիկ, այն, որ նա պահանջի և առաջարկի օրենքը դիտում է որպես օբեկտիվ օրենք, որ գոյություն ունի մարդկանց կամքից անկախ։ Այնուհետև Նալբանդյանը դրամի արժեքի փոփոխությունները կապելով պահանջի և առաջարկի հետ, դրանով ինֆլյացիոն պրոցեսները կապում է ապրանքային տրնտեսության տարերքի հետ։ Նալբանդյանը հասկանում է, որ արժեզրկված փողից մեծ մասամբ տուժում է հասարակ ժողովուրդը, ընդհակառակը հարուստները շահում են։ Նալբանդյանը նշում է, որ տնտեսապես թույլ զարգացած երկրներում, որտեղ չկա կայուն դրամական սիստեմ, ոսկի չի մնում, նա արտահոսում է ուրիշ երկրներ, «ոսկին որպես ազնիվ մետաղ չի կարող մնալ այդպիսի տեղում»։ Այստեղ Նալբանդյանը նկատի ունի Թուրքիան, որի մասին խոսք կլինի ստորև։ Նալբանդյանի դատողությունները՝ քաղաքատնտեսության առանձին կատեգորիաների մասին, ցույց են տալիս, որ «Երկրագործության» հեղինակը ծանոթ է եղել մինչմարքսյան քաղաքատնտեսության հիմնական դպրոցներին։ Ֆիզիոկրատների ազդեցությունն այնքան ակնհայտ է Նալբանդյանի տնտեսական հայացքների վրա, որ բուրժուական քննադատները նրան համարում էին ֆիզիոկրատ։

Սակայն այդ գնահատականը միանգամայն սխալ է։ Նալբանդյանը՝ հատ-

[1] Մ. Նալբանդյան, Երկերի ժող., 3-րդ հատ., էջ 64։
[2] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ 94, 1933 թ. հրատ. հայերեն։

կացնելով առաջատար տեղը գյուղատնտեսությանը, նա չի բացասում արդյունաբերության և առևտրի դերը ժողովրդական տնտեսության զարգացման գործում։ Երկրորդը՝ ֆիզիոկրատները հանդիսանում էին բուրժուազիայի իդեոլոգները, նրանք կապիտալիստական հասարակությունը հավերժացնում են, հակապատմական մոտեցում են ցուցաբերում դեպի հասարակական երևույթները։ Նալբանդյանը դրանց հակառակ կապիտալիզմը դիտում է որպես անցողիկ պատմական կատեգորիա և ապագա սոցիալիստական հասարակարգի անունից է քննադատության ենթարկում կապիտալիզմը։

Նալբանդյանը քիչ է տարվել քաղաքատնտեսության առանձին կատեգորիաների վերաբերյալ վերացական դատողություններ անելով, բայց ամենայն սրությամբ, ռևոլուցիոն կրքոտությամբ քննադատել և մերկացրել է կապիտալիստական հասարակության հակասությունները, հատկապես բուրժուական պետությունների գաղութային քաղաքականությունը։ Նալբանդյանը իր աշխատություններում ապացուցում է, որ տնտեսական խնդիրը չի կարելի լուծել խաղաղ ճանապարհով, միայն ռևոլուցիոն ուղիով կարելի է այդ հարցը լուծել։ Ըստ որում իր պայքարի հենարանը համարում է հասարակ ժողովուրդը։ Նալբանդյանի կարծիքով հարուստ դասակարգերը օգնության կարիք չեն զգում։ Անգամ ամենաբարբարոս կարգերում (ինկատի ունի Թուրքիան) նրանք փրկվում են իրենց փողի քսակներով։ Նալբանդյանը կապիտալիզմի քննադատությունից ավելի սուր ռևոլուցիոն եզրակացություններ է անում, քան Արևմտյան Եվրոպայի սոցիալիստ ուտոպիստները։ Նա գտնում է, որ անհաշտելի հակասությունները չի կարելի հաշտեցնել, ժողովրդի և հարուստների, մետրոպոլիայի և գաղութների միջև գոյություն ունեն անտագոնիստական հակասություններ, նա փորձում է այդ հակասությունների պատճառները վերհանել, բացատրել։ Նալբանդյանը հատկապես ամենայն սրությամբ մերկացնում է եվրոպական պետությունների գաղութային քաղաքականությունը։ Նալբանդյանն այդ հարցում մինչմարքսյան քննադատների մեջ կանգնած է ամենահետևողական դիրքերում։ Նա մի գլուխ բարձր է կանգնած ֆրանսիական ուտոպիստներ Սեն Սիմոնից, Ֆուրյեից և ուրիշներից, Նալբանդյանի այդ հետևողական դիրքը մեր կարծիքով պիտի բացատրել ռուսական ռևոլուցիոն դեմոկրատիայի անմիջական ազդեցությամբ։ Նալբանդյանը պահանջում է հարստահարվող ժողովուրդների լիակատար ազատագրությունը օտարերկրյա գաղութային պետությունների ճնշումից և շահագործումից։ Բոլոր պետությունները «քաղաքակրթության տարածման» կեղծ ֆրազայով խաբում են Եվրոպայի և Ասիայի ստրկացած ժողովուրդներին, շահագործում են, ստրկացնում նրանց, ոտնահարելով այդ ժողովուրդների ազգային իրավունքները։ Նալբանդյանը հասկանում է, որ գաղութային ժողովուրդները գտնվում են կրկնակի հարստահարության, ճնշման տակ՝ սեփական և օտարազգյա կեղեքիչների կողմից։ Եվրոպական ժողովուրդները ևս իրենց կառավարությունների գաղութային քաղաքականությունից ոչ մի օգուտ չեն ստանում, բացի վնասից. պատերազմների ժամանակ նրանց բռնի կարգով կռվի են ուղարկում գաղութային ժողովուրդների դեմ։ Նալբանդյանը պատրաստ է ամեն ինչ անելու իր ժողովրդի ազատագրության համար։ Նա խորապես գիտակցում է, որ հայ ժողովրդի ազատագրությունը սերտ կերպով կապված է ռուսական ռևոլուցիայի հաղթանակի հետ, երբ ցարական Ռուսաստանի բոլոր ժողովուրդները պիտի

ազատագրվեն։ Նալբանդյանը բարձրացնում է ժողովրդական պայքարի գրոշը և հաստատ համոզված է, որ ինքը ծառայում է հայ հասարակ ժողովրդի շահերի պաշտպանությանը։ Հայ հարուստները և մյուս իշխող դասակարգերը չեն դառնում նրա ուշադրության առարկան։ Նալբանդյանը դեռևս «Երկրագործությունից» առաջ գրված իր հռչակավոր «Երկու տողում» գրում էր.

«Մեք ազատակամ նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու։ Մեր անձը և գրիչը չնվիրեցինք հարուստներին, նոքա յուրյանց արծաթի թումբերի տակ միշտ անխոցելի են, նաև բռնակալների իշխանության մեջ։

Բայց այն խեղճ հայը, այն հարստահարված, ողորմելի, աղքատ, մերկ և քաղցած հայը, ոչ միայն ճնշված օտարներից և բարբարոսներից, այլև յուր հարուստներից, յուր հոգևորներից և կիսագրագետ ուսումնական կամ փիլիսոփա ասվածներից, ահա այն հայը ամենայն արդարացի իրավունքով գրավում է մեր ուշադրությունը և նորան դարձյալ առանց և վայրկենական երկմտության, նվիրեցինք մեր բոլոր կարողությունը։

Պաշտպանել այն հայի առաթուր կոխված իրավունքը է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը։ Եվ այս նպատակին հասնելու համար չէ պիտո ընկրկինք ոչ բանտի և ոչ աքսորի առջև, ոչ միայն բանիվ և գրչով, այլև զենքով և արյունով, եթե մի օր արժանի լինինք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր արյունով»[1]

Այս տողերի ցույց են տալիս, թե որքան հետևողական է եղել Նալբանդյանն իր պայքարի ընթացքում, այդ պատճառով զարմանալի չպիտի թվա նրա այնքան սուր բացասական վերաբերմունքը «Երկրագործությունում» դեպի կապիտալիստական հասարակությունը։

Նալբանդյանը փաստերով ապացուցում է, որ հումանիզմի կամ «քաղաքակրթության» տարածման մոտիվները չեն անգլիական գաղութային քաղաքականության շարժիչ զսպանակները, ինչպես փորձում են ապացուցել գաղութային պետությունների պաշտպան գաղափարախոսները, այլ ռեալ նյութական շահը, որը Անգլիային հարկադրում է գաղութացնել Հնդկաստանը և թալանել չինական ժողովրդին։

«Մինչև այժմ բռնակալ աշխարհակալությունքը մի սուտ փաստ ունեին յուրյանց ձեռքում, որ այսօր չէ կարող արդարանալ և մարդկային բանականության դիմանալ։ Ի՞նչ էր այդ փաստը։ Այն թե հզոր կառավարությունքը տիրում են զանազան աշխարհների, զանազան ազգերի, միմիայն վայրենությունը քաղաքակրթելու համար։ Անձնական շահը չէ, ոչ, քավ լիցի, մարդկության սերն է, որ ստիպում է նորանց ստրկացնել զանազան ազգեր, որովհետև այդ ազգերը հետ են մնում և չեն քաղաքակրթվում»[2]

Նալբանդյանը ցույց է տալիս թե ինչպես Անգլիան գաղութային առևտրի միջոցով մասնավորապես աֆիոնի առևտրով թալանում և թունավորում է Հնդկաստանի և Չինաստանի ժողովուրդներին։ Սակայն Նալբանդյանը նկատում է, որ Անգլիան ստրկացնում է, հարստահարում է, շահագործում է ոչ միայն գաղութային երկրների ժողովուրդներին, այլև Եվրոպական ժողովուրդներին։ Անգլիական մամուլը և կառավարությունը դուրս են գալիս լեհական ազգային ազատագրական շարժման դեմ։

[1] Ս. Նալբանդյան, Երկեր, 3-րդ հատ., էջ 23—24։
[2] Նույն տեղում, էջ 88։

Անգլիան իր ժամանակին օգնել է Լեհաստանի բաժանմանը Պրուսիայի, Ավստրիայի և Ռուսաստանի միջև։ Նալբանդյանն ընդգծում է, որ 12 միլիոնանոց լեհական ժողովրդին անգլիական գաղութային բուրժուազիայի իդեոլոգները համարում են անընդունակ սեփական բախտը տնօրինելու, իր ազգային ինքնուրույնությունը ստեղծելու։ Նալբանդյանը բերում է իռլանդական ժողովրդի ստրկացման փաստը Անգլիայի կողմից, և հիմնավորում է որ դա բացահայտ բռնություն է մի ժողովրդի նկատմամբ, որն իր կուլտուրայով և զարգացմամբ միանգամայն ինքնուրույն է և Անգլիայի հետ ոչինչ ընդհանուր չունի։

«Եվ Թեյմսը շատ ժամանակ չէ, որ հրատարակեց թե Իռլանդիո անկախության աշխատողքը իբրև տերության ընդդեմ սպստամբք, կարող են դատապարտվիլ դեպի թիարան...»։[1]

Նալբանդյանը կործանիչ քննադատությամբ է մերկացնում Անգլիայի «քաղաքակրթական միսիան» թե եվրոպական և թե ասիական ժողովուրդների նկատմամբ, ցույց է տալիս, որ անգլիական գաղութարարները զբաղված են գաղութային ժողովուրդների բացահայտ և անսահմանափակ թալանով։ Անգլիական կառավարությունը Չինաստան աֆիոն ներմուծելու համար պատերազմ է հայտարարել և զոռով վերջինիս հարկադրել է ճանաչել Անգլիայի մոնոպոլիան Չինաստան ներմուծվող աֆիոնի նկատմամբ։

Գաղութային առևտրի և գաղութային պատերազմների մասին Մարքսը և Էնգելսը ունեն բազմաթիվ մերկացնող, խարազանող սպառիչ գնահատականներ։ Աֆիոնի առևտրի և նրա հետ կապված պատերազմի մասին Մարքսը հետևյալն է գրում.

«Այս կռիվն սկսվում է Նիդերլանդիայի Իսպանիայից անջատվելով և հսկայական չափեր է ընդունում Անգլիայի հակայակոբինյան պատերազմով, դեռ հիմա էլ շարունակում է ծավալվել աֆիոնի համար Չինաստանի դեմ մղվող պատերազմներով և այլն»։-

Նալբանդյանը հետևողականորեն և վճռականությամբ քննադատում է նաև Ռուսաստանի և մյուս եվրոպական երկրների գաղութային քաղաքականությունը։ Ավստրիան ստրկացրել է բազմաթիվ սլավոնական ժողովուրդների և Իտալիային, Պրուսիան առաջինն է հարվածել Լեհաստանին՝ գրավելով Պոզնանի դքսությունը։ «Իտալիան— լոկ աշխարհագրական անուն է»— մեջբերելով Մետերնիխի այդ խոսքերը, Նալբանդյանը հարձակվում է ավստրիական կայսրության վրա և ապացուցում է, որ իրականության մեջ ավստրիացիները կազմում են իմպերիայի մեջ փոքրամասնությունը, հանուն ինչի նրանք պիտի հարստահարեն մեծամասնությանը։ «Ասել է թե մոտավորապես 8 միլիոն հոգին բռնացել է 27 միլիոն օտար ժողովրդի վերա, ապրում է ծծելով նոցա արյունը, նոցա կենսական ուժը և զորությունը»։[3]

Ըստ Նալբանդյանի՝ ավստրիական հարստահարությունը իտալական և սլավոնական ժողովուրդների նկատմամբ, ոչնչացնում է այդ ժողովուրդների կենսական ուժերը։ Այստեղից հետևում է, որ այդ ժողովուրդները միայն ավստրիական կայսրությունը կործանելու ճանապարհով կարող են ձեռք բերել սեփական ազատություն։ Նալբանդյանը ջերմ համակրանք՝ է տածում

[1] Նույն տեղում, էջ 88։
[2] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ 723։
[3] Մ. Նալբանդյան, Երկեր, 3-րդ հատ., էջ 85։

դեպի իտալական ժողովրդի ազգային ազատագրական շարժումը և նրա առաջնորդ Գարիբալդին։ Նալբանդյանը հատկապես շատ սուր քննադատության է ենթարկում ռուսական ցարիզմի և Տաճկաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը։ Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Ռուսաստանի բոլոր ժողովուրդների հարստահարման և ստրկացման քաղաքականությունն է։ Ցարիզմի գաղութային քաղաքականության քննադատությամբ Նալբանդյանը հանդես է գալիս որպես ռուսական կայսրության բոլոր հարստահարվող ժողովուրդների շահերի պաշտպանը։

Հակառակ հայ նացիոնալիստների, որոնք փորձում էին ազգային հարցը լուծել Ռուսաստանի ժողովուրդների ռևոլուցիոն շարժումից անկախ, Նալբանդյանը հասկանում է, որ հայ ժողովրդի ազատագրումը սերտ կերպով կապված է մյուս ժողովուրդների ազատագրման հետ։ Նալբանդյանը ընդգծում է, որ տնտեսական խնդիրը Ռուսաստանում չի լուծված, նրա լուծումն անհետաձգելի ու հրատապ հարց է։ Չնայած դրան, ցարական կառավարությունը և կալվածատերերը այդ խնդրի լուծումը հետաձգում են, խաբում են ժողովրդին։ Վաղուց կարելի կլիներ ոչնչացնել այդ ստրկատիրական հարաբերությունները, եթե գյուղացին ազատվեր ճորտական վիճակից, ըստ որում նա հասկանում է, որ այդ ազատությունը պիտի լինի իրական, գյուղացին հող պիտի ստանա, այլապես նա դարձյալ կախում կունենա կալվածատիրոջից։ Փրկանքով ազատելը ևս հարցի լուծում չէ, դրանից գյուղացու դրությունը չի բարելավվում։

Ինչպես հողը, որի վրա բնակվում էր և որ գործում էր այժմ ազատվելուց հետո պիտի վարձու առներ յուր պարոնից. ի՞նչ ազատություն էր այս, ոչ ապաքեն և առաջ նույնն էր գործում, միայն այս տարբերությամբ, որ տված դրամը կամ անձնական աշխատությունը փոխանակ դրամի՝ համարվում էր հարկ, իսկ այժմ նույնը պիտի անվանվեր վճարում։ Բայց շինականին ինչ մխիթարություն անվանափոխության մեջ, քանի որ գործը նույնն է»։[1] Այստեղ իմիջի այլոց շատ որոշակի կերպով Նալբանդյանի տեսակետը համապատասխանում է Չերնիշևսկու տեսակետին։

Նալբանդյանը Չերնիշևսկու նման համոզված է, որ հետգնման վճարով գյուղացու դրությունը չի բարելավվում, կալվածատերը դարձյալ մնում է տիրապետող, իշխող։ Նալբանդյանը նշում է, որ կառավարությունը վախենում է ռևոլուցիայից, նա չի համարձակվում գյուղացիությանը առանց հողի ազատագրել, քանի որ դա անմիջապես ռևոլուցիա կառաջացներ, հողով ազատագրելն էլ դժվար է, որովհետև դա կլիներ խոշոր հարված կալվածատիրությանը։ Կառավարությունը շարունակում է խաղալ ժողովրդի հետ, մանյովրներ է կատարում, հետաձգում է հարցի լուծումը, որպեսզի ժամանակ շահի այն լուծելու կալվածատիրության համար բարենպաստ պայմաններով։

Այնուհետև Նալբանդյանը ընդգծում է, որ այդ դրությունը երկար չի կարող շարունակվել։ Սիտուացիան փոխվում է. Ղրիմի պատերազմը թուլացրել է ցարիզմին, Նիկոլայ առաջինի սիստեմն անկում է ապրել. նոր միապետը Ալեքսանդր 2-րդը ևս ժողովրդին խաբում է, չի հրապարակում ճորտատիրության վերացման մանիֆեստը, դա առաջացնում է ժողովրդի ապստամբությունը, որը ընդգրկում է ռուսական կայսրության շատ նահանգներ։ Կառա-

1 Մ. Նալբանդյան, Երկեր, 3-րդ հատ., էջ 87։

վարությունը ապստամբների դեմ զենք է գործադրում։ Սակայն ժողովրդի դեմ զենք գործադրելը ավելի է ուժեղացնում նրա դիմադրությունը և մերկացնում ցարական կառավարության հակաժողովրդական քաղաքականությունը։ Ժողովրդի թափած արյունը անտեղի չի անցնում, ասում է Նալբանդյանը, ժողովուրդը պայքարում փորձ է ձեռք բերում, դաստիարակվում է, գիտակցում է իր շահերը։

Նալբանդյանը նշում է, որ լիբերալ կալվածատերերը ևս ճորտատիրության վերացման կողմնակիցն են, սակայն նա քննադատաբար չի վերաբերվում նրանց նկատմամբ, ենթադրում է, որ նրանք կողմնակից են գոյություն ունեցող կարգերի փոփոխմանը։ Այս հարցում Նալբանդյանի տեսակետը համընկնում է Գերցենի տեսակետին։ Մինչդեռ հայտնի է, որ Չերնիշևսկին անողոքաբար մերկացնում էր ռուս լիբերալներին, բացահայտում էր նրանց տակտիկայի կեղծավոր բնույթը։ Ինչու այս հարցում Նալբանդյանը չի բռնում այնպիսի անհաշտ դիրք, ինչպես Չերնիշևսկին։ Մեր կարծիքով երկու հանգամանք են դեր խաղացել՝ նախ՝ Գերցենի ազդեցությունը։ Հայտնի է, որ Գերցենը որոշ տատանում է ունեցել և հույս է տածել Ալեքսանդր 2-րդի նկատմամբ։ Մյուս կողմից Նալբանդյանը անհրաժեշտ չափով ծանոթ չի եղել ռուսական լիբերալիզմի տակտիկական մեթոդների հետ։ Չնայած այդ տատանմանը, նա վերջին հաշվով չի կասկածել, որ ագրարային հարցը պիտի լուծվի ռևոլուցիոն ճանապարհով։

«Բայց այս ջերմախտական և լարյալ վիճակը անհնար է որ լինի երկարատև։ Եթե վաղորոք, խելք գործ չդրվի, ստրուկը յուր հողով հանդերձ կատարելապես ազատ չի քարոզվի, և այս կերպով այն կնճիռը չլուծվի ստրուկը կացինով կվճռե գործը։ Ժամանակը շատ մոտեցած է և կարծվածից ավելի մոտեցած»։[1]

Այստեղ բացահայտ ձևով հանդես է գալիս Չերնիշևսկու՝ Գերցենին ուղղած նամակի հետևյալ տողերի ազդեցությունը՝

«Ոչ, մեր դրությունը սարսափելի և անտանելի է, միայն կացինը կարող է մեզ ազատել և, կացնից բացի ոչինչ մեզ չի օգնի։ Այս միտքը, կարծեմ հայտնել են Ձեզ, և այն զարմանալիորեն ճիշտ է. այլ փրկություն չկա։ Դուք ամեն բան արիք, ինչ կարող էիք, գործը խաղաղ կերպով լուծելու համար. այժմ փոխեք տոնը և թող ձեր „Колокол“-ը ոչ թե մադիանքների շեփոր հնչի, այլ ահազանգ տա։ Կացնի կոչեցեք Ռուսաստանը»։[2]

Այստեղից պարզ երևում է, որ Նալբանդյանը ծանոթ է եղել Չերնիշևսկու տեսակետին, այդ պատճառով, նա կացնի հարցը առաջ է քաշել։ Իսկ ինչ վերաբերում է Նալբանդյանի այն խոսքերին, որ ժամանակը մոտեցել է, այդ ևս գալիս է նույն վաթսունական թվականների ռևոլուցիոներների հայացքներից, ռևոլուցիոներներ, որոնք ենթադրել են գյուղացիական ռևոլուցիայի անխուսափելիությունը։ Նալբանդյանը ռուս ռևոլուցիոներների հետ համոզված է եղել դրանում։ Նալբանդյանը հասկացել է, թե որքան խոշոր նշանակություն ունեն գյուղացիական ռևոլուցիոն շարժումները ճորտատիրական կարգերի վերացման համար, բայց նրան չի հաջողվել լիակատար կերպով բացահայտել այն պատճառները, որոնք Ռուսաստանի տնտեսական, քաղաքական

[1] Մ. Նալբանդյան, Երկեր, 3-րդ հատ., էջ 61։
[2] Նույն տեղում, էջ 165։

զարգացման ընթացքով անհրաժեշտաբար պիտի բերեին ճորտատիրության վերացմանը։ Նա նկատում է կալվածատերերի և գյուղացիների միջև եղած հակասությունները, բայց չի բացահայտում կապիտալիստական և ֆեոդալական արտադրական եղանակների միջև եղած հակասությունները, որոնք նույնպես արագացնում են ճորտատիրության վերացումը։

Նալբանդյանը չի հասկացել, որ ճորտատիրական կարգերի վերացումը պայմանավորված է տնտեսության զարգացման ամբողջ ընթացքով։ 1861 թվի ռեֆորմը կրում էր բուրժուական բնույթ, նա նպաստեց կապիտալիզմի արագ զարդացմանը, իսկ եթե հաղթանակեր գյուղացիական ռևոլուցիան, ապա կապիտալիզմի զարգացման տեմպերն ավելի արագ կլինեին։ Նալբանդյանը սուբյեկտիվորեն համոզված է եղել, որ գյուղացիական ռևոլուցիայի հաղթանակի հետևանքով գյուղացիությունը վերջնականապես կազատվի քաղցից և աղքատությունից։ Նա չէր ենթադրում, որ գյուղացիական ռեֆորմի էությունը բուրժուական է։ Լենինը այդ մասին գրել է. «Գյուղացիական ռեֆորմի բովանդակությունը եղել է բուրժուական և այդ բովանդակությունը երևան է եկել ավելի ուժեղ, որքան փիչ են կտրտվել գյուղացիների հողերից, որչափ նրանք լիակատար կերպով բաժանվել են կալվածատերերից, որքան ճորտատերերին վճարվող տուրքի չափը փիչ է եղել (այսինքն հետգնման վճարը), որքան այս կամ այն վայրի գյուղացիները դործը կազմակերպել են ճորտատերերի ազդեցությունից ու ճնշումից ազատ»[1]

Նալբանդյանը հետազոտում է Թուրքիայի տնտեսական և քաղաքական վիճակը։ Նրա կարծիքով Թուրքիան հանդիսանում է կիսագաղութային երկիր, Անգլիայի և Ֆրանսիայի թելադրանքով է վարում իր ներքին և արտաքին քաղաքականությունը։ Թուրքիայի կիսագաղութ լինելը հետևանք է նրա տնտեսական, քաղաքական և կուլտուրական հետամնացությանը։ Թուրքիայի էկոնոմիկայի հետամնացության պատճառը Նալբանդյանը բացատրում է նրանով, որ կառավարությունը չի նպաստում հայրենի արդյունաբերության, գյուղատնտեսության և առևտրի զարգացմանը։

Կառավարության սխալ մաքսային քաղաքականության հետևանքով Թուրքիայի էկոնոմիկան վեր է ածվում Եվրոպական էկոնոմիկայի կցորդի։ Թուրքական կառավարությունը խարխլում է սեփական տնտեսական բազան, ասում է Նալբանդյանը, Թուրքիայի անկումն անխուսափելի է. քաղցը և աղքատությունը պիտի տիրապետեն այդ երկրում։ Այսպիսով, Նալբանդյանը փորձում է Թուրքիայի հետամնացությունը բացատրել նրա կառավարության ռեակցիոն, հակաժողովրդական քաղաքականությամբ։ Նալբանդյանը նկատում է, որ սուլթանական Թուրքիայի տիրապետող շրջանները, իրենց անհեռատես քաղաքականությամբ, չեն նկատում, որ պետական պարտքերի աճը Թուրքիայի սնանկացման ցուցանիշն է։ Նրանք չեն մտածում այդ պարտքերից ազատվելու մասին, ավելացնում են հարկերի չափը, այդպիսով ժողովրդի համար ստեղծում են անելանելի դրություն, ժողովուրդը կրկնակի է հարստահարվում և կողոպտվում։

Նալբանդյանը նշում է, որ Տաճկաստանի պետական բյուջեի դեֆիցիտը 1861—1862 թ. թ. կազմում էր 49,124,685 ֆր., բայց այդ կառավարությանը չի մտահոգում. նրա ներկայացուցիչները մխիթարվում են նրանով, որ եվրո-

[1] В. И. Ленин, XV т., изд. III, стр. 143.

պական պետությունների պետական պարտքերը ավելի խոշոր չափերի են հասնում։

Այդ մարդիկ հաշվի չեն առնում, որ եվրոպական պետությունների պարտքերի դիմաց կանգնած է նրանց տնտեսական հզորությունը, մինչդեռ Թուրքիան դրանից զուրկ է։

«Ինքա ունին երկաթուղիք, ունին հսկա նավատորմ, զինարան, զորք, բանակ և այլ հազար ու մի քաղաքական կամ զինվորական պատրաստություն։ Իսկ Թուրքիան յուր պարտքերի հանդեպ ոչինչ ունի ցույց տալու սրեք ու կես նավ, բացի ծովագնացությունից, ուրիշ ամեն բանի պիտանի, մի քանի հազար քաղցած և մերկ զինվոր, որ տարիներով չեն տեսնում ռոճիկի երես, ներս մտնող ապրանքների մաքսը աննշան, յուր մեջ պատրաստված ապրանքի վերա ավելի ծանր հարկ, ոչ երկրագործություն, ոչ ճանապարհ, ոչ հաղորդակցություն, ոչ գիտություն և ոչ արվեստ։»[1] Սուլթանական կառավարության գլուխ կանգնած են այնպիսի քաղաքական գործիչներ, որոնք իրենց անձնական շահերը բարձր են դասում պետական և ազգային շահերից։ Նրանք զբաղվում են գանձարանի կողոպուտով, ընդունակ չեն երկրի զարգացման մասին մտածելու։ Այդպիսի երկրում, հասկանալի է, որ հասարակ ժողովուրդը ավելի է տուժում և մեծ զրկանքներ կրում։ Հատկապես տառապում են, դաժան շահագործման ենթարկվում քրիստոնյաները, մասնավորապես հայերը։ Թուրքական կառավարության պաշտոնյաները հարստանում են հասարակ ժողովրդի արյունի և քրտինքի հաշվին։ Նալբանդյանը ընդգծում է, որ այդ վիճակը երկար չի տևի։ Հասարակությունը պիտի ձեռք առնի միջոցներ այդպիսի կառավարիչներից ազատվելու համար։ Ժողովրդի թշվառ վիճակը կհարկադրի նրան՝ ակտիվ պայքարի ելնելու տիրող կարգերի դեմ։

«Եթե հարուստ լիներ հասարակությունը, կարոտություն չկար հնար մտածելու, ճանապարհը փոխելու. նորա աղքատ լինելը, միևնույն ժամանակ, կարող է լինել նորա փրկությունը»։[2] Այնուհետև Նալբանդյանը ընդգծում է, որ թուրքական կառավարող շրջանների հակաազգային, հակաժողովրդական քաղաքականությունը խորամանկ ձևով օգտագործում են եվրոպական երկրները իրենց շահերի համար։ Նրանք քրիստոնյաների պաշտպանության քողի տակ խառնվում են Թուրքիայի ներքին գործերին, ձևանում են տաճկական կառավարության «բարեկամներ», խորհուրդներ են տալիս երկրի կառավարման մասին։ Այսպես, օրինակ՝ ֆրանսիական թագավոր Լուի Ֆիլիպը խորհուրդ է տալիս օսմանյան կառավարությանը՝ չհալածել հայ կաթոլիկներին, որպեսզի չլատվի հայերի միասնությունը, հեշտ լինի նրանց ճնշելը։

Նալբանդյանը քննադատում է տաճկական կառավարության ապիկար անտաղանդ քաղաքագետներին, որոնք չեն հասկանում եվրոպական պետությունների ստրկացնող, հարստահարող քաղաքականության իմաստը։ Եվրոպական պետությունները՝ շահագործելով Թուրքիայի հարստությունները, նրան դարձնելով իրենց գաղութը, ժողովուրդների ստրկացման գործում էլ օգնում են Թուրքիային։

---

[1] Մ. Նալբանդյան, Երկեր, 3-րդ հատ., էջ 66։
[2] Նույն տեղում։

«Եվրոպական տերությունքը անդադար օգնություն են տալիս Թուրքիային, որ նա դիմանա և չի կործանվի, որպեսզի Թուրքիո ստրկացած հայ, սլավոն և հույն ժողովուրդը քաղաքակրթիչ հոգարարձվից չզրկվիս»[1]

Այդ բոլորը կծու մերկացնող իրոնիա է Թուրքիայի և նրա խնամակալների հասցեին։ Նալբանդյանը, որ այնքան անողոքաբար մերկացրել է եվրոպական պետությունների «քաղաքակրթություն տարածելու միսիայի» կեղծավոր խաբեբայական էությունը, չէր կարող անտեսել այն փաստը, որ առավել ևս Թուրքիայի հպատակները «քաղաքակրթվելու» կարիք չեն զգում։ Հույները, սլավոնները և հայերն իրենց կուլտուրական զարգացմամբ ավելի բարձր աստիճանի վրա են կանգնած եղել, քան տիրապետող թուրքերը։ Նալբանդյանը ցույց է տալիս, թե ինչպիսի մեթոդներ են գործադրում թուրքական և այլ «քաղաքակրթողները» ստրկացված ժողովուրդների նկատմամբ։

«Սոքա ամենքը, իբրև բոնի վարժապետ, բաղաքակրթություն են տարածում, և ոչ ոք չէ հարցնում աշակերտի կամքը, կամի՞ արդյոք ուսանել թե ոչ։ Սակայն չէ պիտո աչքից հեռացնել նոցա քաղաքակրթության տարբերությունը մեր հասկացած քաղաքակրթութենից։ Ահա՝ նոցա դպրոցները, պոլիցկանք և ժանդարմը՝ դաստիարակները, շղթան՝ հրահանգիչ դիրքը, աքսորը՝ բարոյականությունը վերին աստիճանի կազդուրելու մարզարան, կախաղանը և գլխապարտության խայտառակ սյունը «գուռն ճշմարիտ», որ տանի ի կյանս հավիտենականու»[2]

Ինչքան այժմեական են հնչում Նալբանդյանի այս տողերը։ Այսօր ևս Անգլո-ամերիկյան իմպերիալիզմի գլխավորությամբ բոլոր երկրների իմպերիալիստները գաղութային ժողովուրդների նկատմամբ «քաղաքակրթելու» մեթոդներն են գործադրում, ինչ որ Նալբանդյանի էպոխայում, միայն այն տարբերությամբ, որ այդ նպատակով օգտագործվում է տեխնիկան և գիտությունը, փորձում է արհեստական կերպով արգելակել փտող, նեխվող իմպերիալիստական սիստեմի կործանումը։ Թուրքիան այսօր նոր ոխնամակալ է ձեռք բերել հանձինս ամերիկյան իմպերիալիզմի, որը նույնպես առանց աշակերտի կամքը հարցնելու «քաղաքակրթում» է։

Նալբանդյանը՝ քննադատելով Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքականությունը, հանդամանորեն վերլուծության է ենթարկում Հայաստանի վիճակը։ Նա նշում է նատուրալ տնտեսության քայքայման պրոցեսը, բացահայտում է առևտրական կապիտալի դերն ու նշանակությունը։ Նալբանդյանը կապիտալիզմի զարգացման պրոցեսը Թուրքիայում բնութագրում է միայն նրա բացասական կողմերով, այդ պրոցեսի դրական կողմը չի նկատում։ Հայ վաճառականները հանդիսանում են օտարերկրյա կապիտալի գործակալները, նրանք ինքնուրույն նշանակություն չունեն։ Հայ արհեստավորները, բանվորները, բեռնակիրները, որ Հայաստանի զանազան մասերից կենտրոնացել են խոշոր քաղաքները, ապրում են կիսաքաղց, մուրացիկ կյանք։ Նալբանդյանի ծառայությունը այստեղ ևս այն է, որ նա դարձյալ ընդգծում է կապիտալիզմի հակասությունները, բայց նա այդ երևույթների ներքին պատճառները

---

[1] Մ. Նալբանդյան, Երկեր, 3-րդ հատ., էջ 80։
[2] Նույն տեղում։

և այն տնտեսական օրենքների բնույթը, որոնք պայմանավորում են բնատնտեսության քայքայումը, չի բացահայտում։

Նալբանդյանը չի նկատում, որ հայ բեռնակիրները, արհեստավորները, որոնք կենտրոնացած են խոշոր քաղաքներում, ավելի նախաձեռնող, ավելի ակտիվ են, քան հայ գյուղացին, որ նահանգներում ենթարկվում է բազմապիսի հարստահարումների և կեղեքումների։ Լենինը իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» պատմական աշխատության մեջ ապացուցել է, որ բնատնտեսության քայքայումն իր բացասական կողմերով հանդերձ պրոգրեսիվ երևույթ է։ Մի ուրիշ տեղ Լենինը գրել է.

«Նստակյաց մոռացված, իր գյուղում ամրակայված, տերտերին հավատող, «մեծավորից» վախեցող ճորտ գյուղացու փոխարեն աճել է գյուղացիների մի նոր սերունդ, որը լինելով արտադնաց զբաղմունքներում, քաղաքներում դառն փորձից, թափառական կյանքից և վարձու աշխատանքից սովորել է «ուրիշ բան»։[1]

Լենինի այդ գրույթը վերաբերվում է նաև Նալբանդյանի նկարագրած հայ գյուղացուն։ Նալբանդյանը քննադատելով Թուրքիայի կառավարող ջրջանների հակաժողովրդական քաղաքականությունը, ցույց է տալիս, որ ժողովրդական մասսաները Տաճկաստանում գտնվում են ոչ միայն սուլթանական դաժան ռեժիմի կեղեքման, հարստահարման ծանր լծի տակ, այլև եվրոպական պետությունների հարստահարության։ Այդ պետությունների կողմից Թուրքիան գաղութի վերածելու քաղաքականությունն ավելի սաստկացնում է Թուրքիայում ապրող ժողովուրդների ստրկական վիճակը։ Ֆինանսական, տնտեսական տեսակետից հաճախակի սնանկացող սուլթանական կառավարությունը պետական պարտքերի ամբողջ ծանրությունը գցում է աշխատավոր մասսաների ուսերին։

Չնայած Նալբանդյանը շատ սուր կերպով քննադատության է ենթարկում կապիտալիզմը, բացահայտում է կապիտալիզմի հիմնական հակասության առանձին արտահայտությունները, մասսաների աղքատիկ վիճակը, ճգնաժամների անխուսափելիությունը, գաղութների և մետրոպոլիայի միջև եղած խոր անտագոնիստական հակասությունները և այլն, բայց և այնպես նա կապիտալիզմի հիմնական հակասության էությունը չի ըմբռնում, նա քննադատելով կապիտալիստական հասարակության բոլոր պարազիտ դասակարգերին, չի ընդգծում արդյունաբերական բուրժուազիայի և նրա անտիպոդի պրոլետարիատի միջև եղած հակասությունը, որ հանդիսանում է կապիտալիստական հասարակության կարևորագույն հակասությունը, այլ խոսքով՝ նա չի նկատում բուրժուական հասարակարգի գերեզմանափորին՝ պրոլետարիատին։ Նա ընդհանուր ձևով շահագործողները և շահագործվողները հակադրում է միմյանց, ըստ որում կապիտալիստական հասարակության հակասությունների հիմնական պատճառը համարում է հողի մասնավոր սեփականությունը, դրա համար էլ նա իր քննադատության կրակն ուղղում է հողի մասնավոր սեփականության դեմ։ Չնայած այդ սխալ ելակետին, նա հասկանում է, որ բուրժուական հասարակության մեջ ոչ միայն հողի նկատմամբ գոյություն ունի մասնավոր սեփականության մենաշնորհը, այլև արտադրության մյուս միջոց-

[1] В. И. Ленин, т. XV, изд. III, стр. 109.

ների։ Իշխող դասակարգերը տիրապետում են հասարակական հարստությանը, հասարակ ժողովուրդը զրկված է հասարակության բարիքներից, այդ պատճառով նոր հասարակարգի կառուցման գործում շահագրգռված են ժողովրդական մասսաները։

Նալբանդյանը՝ քննադատելով կապիտալիզմը, ընդլայնելով նրա հակասությունները, չի բացասում, ժխտում կապիտալիզմի պրոգրեսիվ կողմը, օրինակ, նա ապացուցում է, որ չի կարելի հրաժարվել եվրոպական տեխնիկայից, այն կարելի է ամենայն շահավետությամբ կիրառել, օգտագործել։

Ասիան, ըստ որում Նալբանդյանը հիմնավորում է նոր Ասիան, զարգացման ավելի մեծ հեռանկարներ ունի քան Եվրոպան։

«Շատ մեքենայք որ Եվրոպայի մեջ ներգործում են կրակի և շոգու զորությամբ, Ասիո պարզության մեջ կարող են ներգործել սարերից կատաղաբար վազած ջրերով, որի համար հարկավոր չէ վատնել այն դրամը, ինչ որ եվրոպացին վատնում է ածուխի կամ փայտի համար։ Եվ այն ապրանքը, որի հում նյութը, շատ անգամ Ասիայից երթալով Եվրոպա և պատրաստվելով այնտեղ, հասնում է դարձյալ Ասիա, անցնելով մի քանի ձեռքերից, նույնը, ավելի աժան և նույն որակությամբ կարող է պատրաստվել Ասիո մեջ»[1]

Նալբանդյանը ցույց է տալիս, որ ինդուստրիալ զարգացումը չպիտի լինի Եվրոպայի մենաշնորհը, ասիական ժողովուրդները ևս մեծ հնարավորություններ ունեն արտադրող ուժերի զարգացման համար։ Ասիական ժողովուրդների բնական հարստությունները Նալբանդյանի էպոխայում, դեռևս հարկ եղած չափով շահագործման չէին ենթարկվում և այդ անսպառ աղբյուրների օգտագործումը կդառնար խոշոր քայլ՝ մարդկության հետագա պրոգրեսիվ հառաջադիմության գործում։ Նալբանդյանը փորձում է բացահայտել կապիտալիզմի զարգացման պատճառները և այդ կապակցությամբ քննադատում է այն թեորիաները, որոնք եվրոպական կապիտալիզմի զարգացումը կապում են կլիմայական, աշխարհագրական պայմանների հետ։ «Նորա (Եվրոպայի— Գ. Ս.) կախարդական թովչությունը ոչ նորա աշխարհագրական անունի մեջ է և ոչ նորա կլիմայի մեջ։ Նորա գործունեությունն է որ այսօր պատգամ է տալիս բոլոր երկրագունդին։ Շվեցիայի սառնամանյայ մեջ նա արվեստով և բյուր հոգաբարձությամբ՝ հառաջ է բերում այն, ինչ որ առանց աշխատության բնությունը ինքը կարող է մեզ տալ Ասիայում, եթե՝ միայն լինի մեր մեջ ստանալու ձգտումը»[2]

Ըստ Նալբանդյանի հասարակության զարգացման գործում վճռական դեր են խաղում ոչ թե բնական պայմանները, այլ մարդկանց աշխատանքային, արտադրական գործունեությունը։ Նալբանդյանը արտադրող ուժերի և արտադրական հարաբերությունների կատեգորիաների մասին դեռևս գաղափար չունի, բայց նրա հարցադրման ռացիոնալ կողմը վկայում է, որ նա կապիտալիզմի զարգացումը փորձում է բացատրել հասարակության զարգացման օրենքներով, ոչ թե աշխարհագրական գործոններով։

Այսպիսով՝ Նալբանդյանը խիստ քննադատության է ենթարկում կապիտալիզմի հակասությունները, ցույց է տալիս, որ այդպիսի հակասություն-

[1] Մ. Նալբանդյան, Երկեր, 3-րդ հատ., էջ 80։
[2] Նույն տեղում։

րով նա երկար գոյություն ունենալ չի կարող, նա պիտի կործանվի, տեղի տա մի այնպիսի հասարակության, որտեղ այլևս գոյություն չեն ունենա այդ հակասությունները և ժողովրդի համար կենսական, վճռական նշանակություն ունեցող տնտեսական հարցը կլուծվի։ Թե ինչպես կլուծվի այդ հարցը ապագա հասարակության մեջ և ինչպիսին պիտի լինի այդ հասարակությունը, այդ Նալբանդյանը հիմնավորում է իր ագրարային սոցիալիզմի ծրագրում, որի վերլուծությունը և նրա էության բացահայտումը այս հոդվածի սահմաններից դուրս է։